ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՇՀԾՁԲ-13-1-11/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2013թ-ի դեկտեմբերի 26-ին կնքված ՊԵԿ-ՇՀԾՁԲ-13-1-11/4-1 պայմանագրում 2014թ-ի փետրվարի 3-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 03.02.2014թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 25.12.2014թ.

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1
26.12.13թ. կնքված N ՊԵԿ-ՇՀՇՁԲ-13-1-11/4-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «03» փետրվարի 2014թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Գևորգյանի մի կողմից, և «Փի-Արտ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Կ.Քոչարյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 26.12.13թ. կնքված N ՊԵԿ-ՇՀՇՁԲ-13-1-11/4-1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:
1.2.Պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը սահմանել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:
1.3. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:
1.4.Կողմերը որոշեցին 26.12.13թ. կնքված N ՊԵԿ-ՇՀՇՁԲ-13-1-11/4-1 գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2014 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Փի-Արտ» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Ս. Վրացյան 71, բն. 7
ՀՎՀՀ 02591206	ՀՎՀՀ 00080887
հ/հ 900011054039	հ/հ 2380017731060100
ՀՀ ԵՎ ռազմավարական գործառնական վարչություն ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ Ա.Գևորգյան	«Առեկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ «Փի-Արտ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Կ.Քոչարյան

Հավելված
Հաստատված է
«26» դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՊԵԿ-ԾՀԾՁԲ-13-1-11/4-1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
"Շահող կտրոն" վիճակահանության գովազդային ծառայություններ	4234	11190000	11400000	33570000	44760000	45600000	67140000	78330000	79709500	100710000	111900000	134280000	134280000

* Վճարվող գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Ք.Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՎՀՀ 02591206

Հ/Հ 900011054039

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Գևորգյան

ԿԱՏԱՐՈՂ
«Փի-Էյտ» ՍՊԸ
ք. Երևան, Ս. Վրացյան 71, բն. 7

ՀՎՀՀ 00080887

Հ/Հ 2380017731060100

«Առևկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
«Փի-Էյտ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ս.Ղուկասյան